ՍԴ/0029/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 հուլիսի 2024 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ/0029/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 26-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի մարտի 27-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Արամ Ասատուրի Վարդանյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 69107723 (ՍԴ/0029/01/23) քրեական վարույթը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի մարտի 28-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ/0029/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի ապրիլի 6-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի ապրիլի 13-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի մայիսի 2-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ/0029/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի մայիսի 15-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2.2. 2024 թվականի հունիսի 24-ին թիվ ՍԴ/0029/01/23 քրեական վարույթը վերամակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Ա.Մաթևոսյանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հունիսի 26-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ/0029/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի հունիսի 26-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2022 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ Արամ Ասատուրի Վարդանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի պահանջները և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվելու դիտավորությամբ, չպարզված անձից, ժամանակահատվածում, իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել ՀՀ Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածի ցանկի 110-րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 465 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի, նույն հավելվածի ցանկի 15-րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ 905 գրամ «Ափիոն» տեսակի, նույն հավելվածի ցանկի 90-րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ 38,95 գրամ «Հերոին» տեսակի, նույն հավելվածի ցանկի 81-րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 899,47 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ և ապօրինի պահել իր կողմից շահագործվող «Օպել Զաֆիրա» մակնիշի «74 AE 774» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի պահեստային անվադողի անվահեծի մեջ, ինչն էլ հայտնաբերվել է 2022 թվականի մայիսի 24-ին տվյալ ավտոմեքենայում կատարված խուզարկությամբ (…)»*[1]:

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Ս]ույն քրեական*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 103-104:

գործով մեղադրյալ Արամ Վարդանյանը գտնվում է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում, մեղադրական եզրակացությունը հաստատած մեղադրող Կարապետ Համբարձումյանը, պաշտպան Տիգրան Սարգսյանը և վկա Բահադաո Սուճա Ռամը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարածքից դուրս՝ Երևան քաղաքում:

Դատարանը փաստում է, որ սույն քրեական գործով դեռևս հիմնական դատաքննություններ նշանակելու մասին որոշում չի կայացվել, հետևաբար որևէ ապացույց չի հետազոտվել և ընդդատությունը փոխելով չի տուժի նաև արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի քրեական գործը ողջամիտ ժամկետում քննության առնելու վերաբերյալ սկզբունքը:

Վերոշարադրյալը հաշվի առնելով, նկատի ունենալով, որ մեղադրյալ Արամ Վարդանյանը համաձայնել է քրեական գործի ընդդատությունը փոխելուն, դատավարության մասնակից և վարույթին օժանդակող անձանց գերակշիռ մասը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս՝ Երևան քաղաքում, ուստի դատարանը գտնում է, որ սույն քրեական գործի տարածքային ընդդատությունը պետք է փոխել և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (…)»[2]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հունիսի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261 հոդվածի 5-րդ մասի համատեքստում դիտարկելով «Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթն այլ դատարան փոխանցելու մասին» Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի ապրիլի 13-ի որոշումը, գտնում եմ, որ թիվ ՍԴ/0029/01/23 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխվել և վարույթը*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 47-48:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցվել չէր կարող, քանի որ.

- քրեական գործով հանրային մեղադրողը չի հանդիսանում վարույթի մասնավոր մասնակից և քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու որոշում կայացնելիս նրա բնակության վայրը հաշվի առնվել չէր կարող:

- «Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթն այլ դատարան փոխանցելու մասին» որոշման կայացման պահին գործով վկա Բահադաո Սուճա Ռամի բնակության վայրն է հանդիսացել Կոտայքի մարզի Քասախ համայնքի Ա.Մարտիրոսյան փողոցի 1 շենքի 12 բնակարանը:

- մեղադրյալ Արամ Ասատուրի Վարդանյանը «Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթն այլ դատարան փոխանցելու մասին» որոշման կայացման պահին ևս հանդիսացել է ՀՀ ԱՆ ՔԿԾ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կալանավոր, որպիսի պայմաններում նշված որոշումը կայացնելիս նրա բնակության վայրը ևս հաշվի առնվել չէր կարող: Ավելին՝ քրեական գործում առկա չէ որևէ փաստական տվյալ առ այն, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը զրկված է եղել մեղադրյալին վարույթն իրականացնող մարմնին առավել մոտ տեղակայված քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու հնարավորությունից:

Վերոգրյալի պայմաններում ակնհայտ է, որ «Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթն այլ դատարան փոխանցելու մասին» Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի ապրիլի 13-ի որոշման կայացման պահին Երևան քաղաքը հանդիսացել է միայն քրեական գործով մասնավոր մասնակից՝ պաշտպան Տիգրան Սարգսյանի բնակության վայրը, ինչը նշանակում է, որ Երևան քաղաքը չէր կարող գնահատվել որպես վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության բնակության վայր, իսկ թիվ ՍԴ/0029/01/23 քրեական գործը չէր կարող ըստ տարածքային ընդդատության

փոխանցվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (...)»:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ/0029/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[3]:

---

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[4]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[5]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը»*:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

---

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Պաշտպան Տ.Սարգսյանը նախնական դատալսումների ընթացքում միջնորդել է քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, որի վերաբերյալ մեղադրյալ Ա.Վարդանյանը հայտնել է իր համաձայնությունը[6]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ մեղադրյալ Արամ Վարդանյանը գտնվում է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, մեղադրական եզրակացությունը հաստատած մեղադրող Կարապետ Համբարձումյանը, պաշտպան Տիգրան Սարգսյանը և վկա Բահադառ Սուճա Ռամը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարածքից դուրս՝ Երևան քաղաքում, ինչպես նաև նկատի ունենալով, որ մեղադրյալն իր համաձայնությունն է հայտնել, որպեսզի քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխվի, որոշում է կայացրել քրեական

[6] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, դատական նիստի արձանագրություն, թերթ 36:

վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փախանցելու մասին[7]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմանը՝ փաստելով, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 13-ի որոշման կայացման պահի դրությամբ Երևան քաղաքը հանդիսացել է միայն քրեական գործով մասնավոր մասնակից՝ պաշտպան Տ.Սարգսյանի բնակության վայրը[8]:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս մեղադրյալ Ա.Վարդանյանը հանդիսացել է ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կալանավոր, վկա Բահադառ Սուճա Ռամի բնակության վայրը եղել է Կոտայքի մարզը[9], իսկ պաշտպան Տ.Սարգսյանի բնակության վարը՝ Երևան քաղաքը[10]: Հետևաբար, չի հաստատվում, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվել է Երևան քաղքի առաջին ատյանի ընդհանուր

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթ 242:
[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթ 17:

իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայել է:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին որոշման կայացման պահի դրությամբ նույնպես չի հաստատվել, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

16. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ/0029/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՍԴ/0029/01/23 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

_____ Ս.ՕՀԱՆՅԱՆ